DOI: 10.61484/29538181-ss.8.23-5

ՀՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վարդան Բոստանջյան, Գևորգ Կիրակոսյան

Երևանի պետական համալսարան

Ընդունված է տպագրության, 01.08.2023

Ամփոփագիր. Ուսումնասիրված է ՀՀ սպառողական վարկերի շուկան: Վերլուծության է ենթարկվել սպառողական վարկերի ծավալը և կառուցվածքը, այդ ուղղությամբ վարկավորման հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Քննարկվել են պատասխանատու վարկավորման իրականացման հիմնական մոտեցումները և ներկայացվել են այդ ուղղությամբ կոնկրետ առաջարկություններ:

Հիմնաբառեր. բանկային համակարգ, վարկավորում, ֆինանսավարկային կազմակերպություններ, վարկային միջոցներ, վարկունակություն, ֆինանսական կայնություն

Պատասխանատու վարկավորման համատեքստում հատկապես առանձնանում են սպառողական վարկերը, որոնք հանդիսանում են վարկատու կազմակերպությունների հետ բնակչության հարաբերությունների արդյունք՝ փոխառու միջոցների ներգրավման ու սպառողական նպատակներով օգտագործման հետ կապված: Հարկ է նշել, որ վարկավորման այս տեսակը մյուսների համեմատությամբ ունի որոշակի առանձնահատկություններ: Վարկատու կազմակերպությունները, որպես կանոն, հիմնականում ցածր տոկոսադրույքով վարկավորում են այն հաճախորդներին, որոնք ունեն կայուն եկամուտ, դրական վարկային պատմություն կամ, այլ խոսքով, ռիսկայնության ցածր մակարդակ: Բնակչության մի զգալի հատված, հիմնականում սոցիալապես խոցելի խավերի ներկայացուցիչներ, ովքեր չեն բավարարում նշված պայմաններին, վարկատու կազմակերպությունների կողմից դիտարկվում են որպես ռիսկային հաճախորդ և հնարավորություն են ունենում ստանալ միայն բարձր տոկոսադրույքներով վարկեր: Սպառողական վարկերի արդյունավետ տոկոսադրույքներն, ի տարբերություն մյուս վարկատեսակների, համեմատաբար բարձր են:

Ընդհանուր առմամբ, որոշ վարկատեսակների ռիսկայնությունը մյուսների համեմատությամբ ավելի բարձր է՝ պայմանավորված գերվարկավորման հնարավորությամբ: Այսինքն, նման վարկերի մարման համար շատ հաճախ վարկառուները հարկադրված են նոր վարկեր ձևակերպել: Դա, իր հերթին, նպաստում է բնակչության սոցիալական վիճակի վատթարացմանը՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Նման զարգացումներից խուսափելու համար կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական կարգավորումը՝ այդ թվում նաև սպառողներին նման վարկավորումից զերծ պահելու և պաշտպանելու համար: Տարբեր վերլուծությունները ցույց են տալիս, որ հատկապես սպառողական վարկերը պարունակում են լուրջ ռիսկեր: Դրա մասին են վկայում այդ վարկերի միջին տարեկան արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև վարկերի նվազագույն չափերն ու ժամկետները, որոնք շատ դեպքերում անհամատեղելի են պոտենցիալ հաճախորդների միջին վիճակագրական ամսեկան եկամտի հետ: Սպառողների կողմից վարկային պարտավորության կատարման անհնարինության կամ դժվարության դեպքում նրանք վերաձևակերպում են վարկը, դրանում ներառելով նախկին վարկի չմարված մասը և

տոկոսները, կամ վերցնում են նոր վարկ՝ նախկինը մարելու համար: Արդյունքում, սպառողները ստիպված են լինում անընդհատ մարել նույն՝ «թարմացված» վարկը: Անշուշտ, դա չափազանց ռիսկային է, քանի որ սպառողը կարող է հայտնվել սոցիալական առումով վտանգավոր ու խոցելի իրավիճակում:

Ընդհանուր առմամբ, վարկային միջոցների մատչելիությունը շատ հաճախ դիտարկվում է որպես ֆինանսական ծառայությունների շուկա մուտքի ընդլայնման կարևոր միջոց: Այս առումով, ֆինանսական հասանելիության գնահատման ցուցանիշներից մեկն է հանդիսանում մանրածախ վարկերի ծավալը: Վարկային միջոցների հասանելիությունը բնակչության համար ապահովում է ավելի շատ հնարավորություններ սեփական տնտեսական ծրագրերի իրականացման համար: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ սպառողական վարկերի գծով պարտքի մեծ ծավալը բնակչության համար կարող է ունենալ բացասական հետևանքներ: Վերջիններս հիմնականում դրսևորվում են մանրածախ վարկային պրոդուկտների ոչ պատասխանատու տրամադրման և օգտագործման պատճառով: Միևնույն ժամանակ, մի շարք գործոններ կարող են բացասաբար անդրադառնալ հաճախորդների կողմից վարկային միջոցների ձեռքբերման հետ կապված պատասխանատու որոշումների կայացման վրա՝ հանգեցնելով պարտքի անկառավարելի աճի:

Սպառողական վարկավորման փորձը ցույց է տալիս, որ վարկառուները շատ հաճախ թերագնահատում են սպասվելիք պարտքային բեռը և գերագնահատում են այն սպասարկելու սեփական հնարավորությունները: Տնային տնտեսությունները երկարաժամկետ հատվածում կայուն և որակյալ կենսապայմաններ ապահովելու նպատակով ներգրավում են վարկային միջոցներ: Հայտնի է, որ եկամուտները, որպես կանոն, ավելանում են մարդու տնտեսական ակտիվ կյանքի սկզբնական փուլում և գնալով նվազում են ծերության տարիքում: Դրանով պայմանավորված, ներգրավվող պարտքը հնարավորություն է տալիս տնային տնտեսություններին հարթեցնել սեփական ծախսերը կյանքի ընթացքում: Սակայն նրանցից շատերը կուտակում են ավելի շատ պարտքեր, քան այն մարելու կարողություններն են:

Պարտքի կուտակման առաջին գործոնը ֆինանսական անզգուշությունն է, որի հետևանքով կայացվում են ֆինանսական վատ որոշումներ: Այն, իր հերթին, կապված է վարկի մարման իրական ծավալի մասին ոչ համարժեք պատկերացումների հետ: Վարկավորման պայմանների թափանցիկության անբավարար մակարդակը, ֆինանսական գրագիտության ցածր աստիճանը, սեփական ֆինանսներն արդյունավետ կառավարելու անկարողությունը հանդիսանում են եկամուտների և ծախսերի սխալ պլանավորման պատճառներ: Արդյունքում, հնարավոր անբարենպաստ իրավիճակների հավանականության թերագնահատումը նման վարկառուների համար դառնում է վարքագիծ: Պարտքի կուտակման երկրորդ հիմնական պատճառն անկանխատեսելի իրավիճակների առաջացումն է՝ ինչպիսիք են օրինակ եկամուտների անկումը (աշխատանքի կորուստ), չնախատեսված ծախսերը (թանկարժեք բժշկական սպասարկում) և մի շարք այլ պատճառներ: Հաջորդ պատճառն աղքատությունն է, որը դրա մեջ հայտնված մարդկանց ստիպում է իրենց ընթացիկ կարիքները հոգալու համար վերցնել վարկեր՝ չնայած դրանց մարման քիչ հավանականությանը: Սովորաբար դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ վարկատուները

վարկային պատմության և անհրաժեշտ այլ տեղեկատվության բացակայության պատճառով հնարավորություն չեն ունենում օբյեկտիվ պատկերացում կազմել հաճախորդի ընթացիկ ֆինանսական վիճակի մասին: Ավելին, շատ հաճախ վարկի պահանջմունքն առաջանում է հենց մեծ ծավալի պարտքի պատճառով:

Ընդհանուր առմամբ, գոյություն ունեն պարտքի գնահատման տարբեր միջոցներ: Եվրոպական Միության անդամ երկրներում այն չափվում է հետևյալ չորս հիմնական հատկանիշներից ելնելով [1]:

- տնտեսական (պարտքի մարման գումար),
- ժամանակային (միջինժամկետ և երկարաժամկետ),
- սոցիալական (մինչև պարտքի մարումը իրականացվելիք հիմնական ծախսերը),
- հոգեբանական (պարտքի պատճառով առաջացող սթրեսը):


Պարտքի գնահատման համար անհրաժեշտ է համադրել մի քանի չափանիշներ: Եվրոպական հանձնաժողովի կողմից 2010 թվականին փորձ է կատարվել մշակել չափից շատ պարտքի համընդհանուր սահմանում, որը կիրառելի կլինի ինչպես ԵՄ անդամ պետությունների, այնպես էլ այլ երկրների համար [2]: Մասնավորապես, առաջարկվում է տնային տնտեսությունները համարել չափից շատ պարտքային պարտավորություններ ունեցող, եթե առկա և ակնկալվող ռեսուրսները բավարար չեն առանց կենսամակարդակի նվազեցման ֆինանսական պարտավորությունները կատարելու համար: Պարտքի չափման միավորը պետք է լինի տնային տնտեսությունը, քանի որ առանձին անձանց եկամուտները սովորաբար միավորվում են մեկ տնային տնտեսությունում: Բացի այդ, դիտարկվող ցուցանիշները պետք է ընդգրկեն տնային տնտեսությունների ֆինանսական բոլոր պարտավորությունները. փոխառություններ, սպառողական վարկեր, վարձավճարներ և այլն: Հարկ է նշել, որ չափից շատ պարտքը ենթադրում է ընթացիկ ծախսերի իրականացման անկարողություն և, հետևաբար, պետք է դիտարկվի որպես կառուցվածքային, այլ ոչ թե ժամանակավոր վիճակ: Սեփական ֆինանսական պարտավորությունների կատարման համա տնային տնտեսությունը պետք է էապես կրճատի իր ծախսերը կամ գտնի եկամուտների ավելացման ուղիներ:

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ չափից շատ պարտքի ռիսկը հատկապես աճում է վարկառուի համար անբարենպաստ տնտեսական պայմանների ձևավորման դեպքում, ինչի հետևանքով մեծ փոփոխությունների են ենթարկվում եկամուտները և ծախսերը [3]: Դրա հավանականությունը հատկապես բարձր է այն վարկառուների համար, ովքեր վարկային միջոցներ են ներգրավում հիմնականում ոչ բիզնես նպատակներով, ինչպես նաև աչքի չեն ընկնում ֆինանսական գրագիտության բարձր մակարդակով: Մինչդեռ, դրա բացասական հետևանքներն անդրադառնում են ոչ միայն կոնկրետ անձի, այլև հասարակության վրա: Վերջինիս տեսանկյունից չափից շատ պարտքը դրսևորվում է հետևյալ ասպեկտներով՝ ունենալով որոշակի հետեւանքներ.

- *տնտեսություն*. չափից շատ պարտքը դանդաղեցնում է տնտեսական աճը և զարգացումը, սահմանափակելով վարկերի հետագա հասանելիությունը,


- *սոցիալական*. չափից շատ պարտքը և դրամական հոսքերի անկումը հանգեցնում են սոցիալական շերտավորման խորացմանը, ինչպես նաև աղքատների համար հնարավորությունների կրճատմանը,
- *քաղաքական*. կարգավորող մարմինների կողմից չափից շատ պարտքի սահմանափակման անկարողությունը կարող է ստանալ քաղաքական երանգ,
- *արդարության ընկալում*. վարկատուները կարող են դիտարկվել որպես պատասխանատվությունից ազատված արտոնյալներ, իսկ նրանց կողմից խաբված հաճախորդները՝ պաշտպանությունից զրկվածներ:

Հայաստանում սպառողական վարկավորման իրավական հիմքերը սահմանվում են 2008 թվականին «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքով, որն ուղղված է ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությանը, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը և ֆինանսական միջնորդության ավելացմանը [4]:



Գծապատկեր 1. Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի [5]

Օրենքով տրվում է կրեդիտավորման պայմանագրի հասկացությունը, կարգավորվում են կրեդիտավորման պայմանագրերից բխող հարաբերությունները, դրանց տեսակների առանձնահատկությունները և պարտադիր պայմանները, տարեկան տոկոսադրույքի հաշվարկման կարգը և պայմանները, կրեդիտավորողի պատասխանատվությունը, սպառողների իրավունքները և այդ պայմանագրերի հետ կապված այլ հարաբերություններ:



Գծապատկեր 2. Բանկերի և վարկային կազմակերպությունների հիպոտեկային և սպառողական վարկային պորտֆելը [5]

ՀՀ-ում ընդհանուր վարկերի կառուցվածքում սպառողական վարկերի տեսա-կարար կշիռը բավականաչափ բարձր է: Ընդ որում, այն վերջին տարիներին ունի դանդաղ, սակայն կայուն աճի միտում (տես գծապատկեր 1) :

Ընդ որում, սպառողական վարկերի աճի տեմպերը հատկապես արագացել են 2018-2020 թվականներին (տես գծապատկեր 2) :

2021 թվականին սպառողական վարկերը նվազել են շուրջ 11%-ով, որոնց աճի տեմպը դանդաղ է վերականգնվում հիմնականում հաճախորդների վարկունակության վատթարացման, բանկերի կողմից որոշ սպառողական վարկատեսակների պայմանների խստացման պատճառով:


Սպառողական վարկերի վարկավորման պայմանների դյուրացմանը զուգահեռ ընդլայնվել է վարկային պրոդուկտների տեսականին, որոնք նպաստել են սպառողական վարկավորման աշխուժացմանը տարեվերջին: Սպառողական վարկերի պահանջարկի վրա դրական ազդեցություն են ունեցել ընդհանուր տնտեսական ակտիվացումը և երկարաժամկետ օգտագործման ապրանքների պահանջարկի աճը, ընդ որում՝ վերջինս մասամբ կապվում է նոր բնակարանների ձեռքբերումների աճի հետ: Թեև 2021թ. Սպառողական վարկերի ծավալի նվազմանը, այդուհանդերձ, դրանց աճի դինամիկան վերջին տարիներին ակնհայտ է: Մասնավորապես, 2020 թվականին սպառողական վարկերը նվազել են 1 տոկոսով, նախորդ տարվա 30 տոկոսի աճի պարագայում [6]:

ՀՀ-ում սպառողական վարկերը հիմնականում տրամադրում են բանկերը, իսկ վարկային կազմակերպությունների ու գրավատների մասնաբաժինը բավականաչափ համեստ է:

Աղյուսակ 1. Վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի տրամադրման պայմանները

Անվանումը	Վարկի տոկոսադրույքը	Տրամադրվող գումարի չափը	Ժամկետայնությունը
Արֆին	74 - 141%	100,000-200,000	1-12 ամիս
Բլեսս	32.8- 36.1%	150,000 – 300,000	18-24 ամիս
Կամուրջ	25.47 – 76.46%	Մինչև 2,500,000	1-36 ամիս
Կրեդիտ Կոնցեպտ	25.75 – 37.32%	150,000 – 5,000,000	-
ՍԵՖ Ինտերնեյշնլ	34 - 40%	10,000 – 3,000,000	Մինչև 60 ամիս
Նոր Հորիզոն	31.47 – 51.5%	50,000 – 1,000,000	6 - 24 ամիս
Նորման Կրեդիտ	16.3 – 43.44%	100,000 - 10,000,000	6-36 ամիս
Պրեմիում Կրեդիտ	47.12 – 57.23%	5000 – 750,000	1-36 ամիս
Սմարթ Կրեդիտ	44.92 – 50.07%	100,000 – 1,000,000	6 - 24 ամիս
Ֆաստ Կրեդիտ	23.12 – 42.49%	5000 – 500,000,000	24 ամիս
ԱԵՍ Կրեդիտ	26.2 – 33.1%	100,000 – 1,000,000	Մինչև 24 ամիս

Ընդ որում, վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի տրամադրման պայմանները բավականաչափ խիստ են: Դա հատկապես վերաբերում է վարկի տոկոսադրույքային և ժամկետայնությանը (տես աղյուսակ 1):



Գծապատկեր 3. Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքը [6]

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում սպառողական վարկերի ծավալները զգալի տեղ են զբաղեցնում ընդհանուր վարկավորման կառուցվածքում և շարունակական աճի միտում ունեն: Անշուշտ, բնակչության սոցիալական վատ վիճակի և աղքատության բարձր մակարդակի պայմաններում դա կարող է հանգեցնել որոշակի ռիսկերի առաջացման, որոնք կարող են լուրջ մարտահրավեր կամ սպառնալիք հանդիսանալ տնտեսության համար:

Հաշվի առնելով վարկերի նվազագույն չափը և դրանց տրամադրման ժամկետները, ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում հաճախորդների զգալի մասի համար նման պայմաններով տրամադրված վարկերի մարումը բավականաչափ ծանր բեռ է (տես աղյուսակ 1): Հատկապես կարճաժամկետ սպառողական վարկերն օգտագործում են համեմատաբար ցածր կամ անկայուն եկամուտ և վարկային վատ պատմություն ունեցող ռիսկային հաճախորդները: Վարկային կազմակերպությունները բանկերի համեմատությամբ կարճաժամկետ սպառողական վարկեր տրամադրում են զգալիորեն բարձր միջին տարեկան արդյունավետ տոկոսադրույքով և, այդ տեսանկյունից, ձեռնտու չեն: Սակայն դրանց պոտենցիալ սպառողներ են հանդիսանում ռիսկային հաճախորդները: Այլ կերպ ասած, այս դեպքում ռիսկը փոխհատուցվում է բարձր տոկոսադրույքով: Սա է պատճառը, որ ռիսկային հաճախորդները հիմնականում օգտվում են վարկային կազմակերպությունների ծառայություններից: Այլ խոսքով, սպառողական վարկավորման ծավալների ավելացման նկատմամբ վարկատու կազմակերպությունների հակվածությունը կապված է տվյալ սեգմենտի բարձր շահութաբերության հետ:

ՀՀ ԿԲ գնահատականներով, վարկային բեռը չպետք է գերազանցի ամսական եկամուտների 40-60 տոկոսը, որի դեպքում միայն այն չի համարվի ռիսկային: Համաձայն Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջի, 300,000 դրամը չգերազանցող սպառողական վարկեր տրամադրելիս վարկատուները պետք է գնահատեն սպառողի պարտավորությունների ամսական գումարի և սպառողի ամսական եկամտի

հարաբերությունը և վարկը տրամադրեն միայն այդ հարաբերության 50%-ը չգերազանցելու դեպքում [7]: Անշուշտ, դա դրական քայլ է տվյալ խնդրի լուծման ուղղությամբ, չնայած չի ապահովում ամբողջական և համապարփակ լուծում:

ՀՀ-ում սպառողական վարկերի մեծ ծավալը և դրա աճի միտումները բնակչության սոցիալական վիճակի և աղքատության բարձր մակարդակի պայմաններում կարող են հանգեցնել որոշակի ռիսկերի առաջացման՝ սպառնալիք հանդիսանալով տնտեսության համար: Դրա կանխումը պահանջում է մակրոպրուդենցիալ քաղաքականության գործիքների և միջոցների արդյունավետ կիրառում, ինչը հնարավորություն կտա սահմանափակել ռիսկերի առաջացումը և բարձրացնել ֆինանսաբանկային կազմակերպությունների ֆինանսական կայունության մակարդակը:

Դիտարկված հիմնախնդրի հետազոտության արդյունքում անհրաժեշտ ենք համարում հետևյալ քայլերի իրականացումը.

- Սպառողական վարկերի շուկայում կառավարելիության անհրաժեշտ մակարդակի ապահովումը ենթադրում է կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների սահմանում և դրանց ուղղված քայլերի իրականացում: Կարճաժակետ հատվածում հիմնական քայլեր պետք է հանդիսանան Կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ կարգավորման գործիքների կիրառումը՝ ֆինանսաբանկային մարմինների նկատմամբ նորմատիվային պահանջների սահմանմամբ: Երկարաժամկետ հատվածում սպառողական վարկերի նկատմամբ բնակչության պահանջարկի, հետևաբար նաև դրանց ծավալների կրճատումը առավելապես պայմանավորված է բնակչության եկամուտների աճով, ինչը պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության հիմնական թիրախներից մեկը պետք է հանդիսանա:
- «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում պետք է ամրագրել, որ կրեդիտը մարելու նպատակով սպառողի կողմից վճարման ենթակա վճարումները, տոկոսները և այլ պարտադիր վճարների գումարի չափը, թիվը, հաճախականությունը կամ ժամկետները, ինչպես նաև այդ վճարումների ամբողջ (ընդհանուր) գումարի չափը նախապես և պայմանագրի կնքման ժամանակ կրեդիտավորողի կողմից պարտադիր կերպով գրավոր և բանավոր կերպով, մատչելիորեն ներկայացվում է սպառողին:
- Սպառողական վարկավորման նպատակով ապրանքները ապառիկ կարգով ձեռք բերելու դեպքում միմյանց զուգահեռ ու նույն տառաչափով պետք է գնանշվեն ինչպես կանխիկ վաճառքի գինը, այնպես էլ ապառիկ ձեռքբերման գինը՝ ներառյալ սպառողական վարկի տրամադրման ժամանակահատվածում կատարման ենթակա մարումները և բոլոր տեսակի, այդ թվում նաև սպասարկման վճարները:

Գրականություն

1. Responsible Lending. Overview of Regulatory Tools. THE WORLD BANK. www.worldbank.org

2. European Commission (2010), Over-indebtedness: New evidence from the EU-SILC special module, Research note 4/2010.

3. Schicks Jessica, Over-Indebtedness In Microfinance – An Empirical Analysis of Related Factors on the Borrower Level, 2012, Centre for European Research in Microfinance (CERMi).

4. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք
5. Ֆինանսական կայունության հաշվետվություն 2021
6. Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020
7. «Երեք հարյուր հազար դրամը չգերազանցող սպառողական կրեդիտների տրամադրման ընթացքում սպառողների վարկունակության գնահատման կանոնների վերաբերյալ» կարգ

В. Бостанджян, Г. Киракосян - ПРОБЛЕМЫ ДЕЯТЕЛЬНОСТИ РЫНКА ПОТРЕБИТЕЛЬСКИХ КРЕДИТОВ РА. Статья посвящена исследованию рынка потребительских кредитов РА. Проанализированы объем и структура потребительских кредитов, проблемы кредитования в этом направлении и пути их решения. Обсуждены основные подходы к осуществлению ответственного кредитования и представлены конкретные предложения в этом направлении.

V. Bostanjyan, G. Kirakosyan - PROBLEMS OF THE RA CONSUMER CREDIT MARKET ACTIVITY. The article is devoted to the research of the consumer loans market of the Republic of Armenia. The volume and structure of consumer loans, the problems of lending in this direction and ways to solve them were analyzed. The main approaches to the implementation of responsible lending were discussed and specific proposals in this direction were presented.

Keywords: banking system, lending, financial and credit organizations, credit facilities, creditworthiness, financial stability